

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«_____» _____ թ.
վայրը _____, այսուհետ՝ «Հեղինակ», ի դեմս
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
_____ հիման
պաշտոնը, ազգանունը, անունը
վրա, մի կողմից, և _____, այսուհետ՝ «Կիրառող», ի
դեմս
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
_____ հիման
պաշտոնը, ազգանունը, անունը
վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Հեղինակը Կիրառողին է փոխանցում _____,
այսուհետ «Ստեղծագործություն», օգտագործման բացառիկ (ոչ բացառիկ) իրավունք, հետևյալ ձևերով՝
1.1.1. Ստեղծագործության վերարտադրում (վերարտադրության իրավունք),
1.1.2. Ստեղծագործության նմուշների տարածում ցանկացած ձևով՝ վաճառք, վարձույթով տալ և այլն (տարածման իրավունք),
1.1.3. Տարածման նպատակով Ստեղծագործության նմուշների արտահանում (արտահանման իրավունք),
1.1.4. Ստեղծագործության հրատարակային ցուցադրում (հրատարակային ցուցադրման իրավունք):
1.1.5. Ստեղծագործության հրատարակային կատարում (հրատարակային կատարման իրավունք),
1.1.6. Ստեղծագործության հաղորդում (ներառյալ ցուցադրումը, կատարումը կամ եթերով հեռարձակումը)՝
համընդհանուր տեղեկացման համար (եթերով հեռարձակման իրավունք),
1.1.7. Ինտերնետ ցանցով հեռարձակում (Ինտերնետ ցանցով հեռարձակման իրավունք),
1.1.8. Ստեղծագործության թարգմանում (թարգմանության իրավունք),
1.1.9. Ստեղծագործության ձևափոխում կամ այլ կերպ վերամշակում (վերամշակման իրավունք)

2. Իրավունքի հանձնման ժամկետը

Սույն պայմանագրի 1-ին կետում նշված իրավունքները Հեղինակի կողմից փոխանցվում են Կիրառողին _____ տարի ժամկետով՝ սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից հաշված:

3. Իրավունքների կիրառման տարածքը

Սույն պայմանագրի համաձայն, Կիրառողը իրավունք ունի իրեն հանձնված իրավունքները օգտագործել տարածքում:

4. Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված ցանկացած, մի քանի կամ բոլոր ձևերով ստեղծագործության օգտագործման համար Կիրառողը պարտավորվում է վճարել շահույթի _____ տոկոսի չափով՝ Ստեղծագործության համապատասխան օգտագործման համար:
4.2. Վճարումը կատարվում է ամեն ամիս, ոչ ուշ, քան հաջորդ ամսվա _____ -ը:
4.3. Կիրառողը պարտավորվում է Հեղինակի պահանջով ներկայացնել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են սույն պայմանագրի 4.1. կետով նշված Հեղինակին հասանելիք վճարի չափը որոշելու համար:
4.4. Վճարումը ուշացնելու դեպքում Կիրառողը Հեղինակին վճարում է տույժ՝ ուշացված վճարվելիք գումարի _____ տոկոսի չափով:

5. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հեղինակ

ստորագրություն

Կիրառող

ստորագրություն

Կ.Տ.